

8267

8268

8269

8270

8271

8272

634.8

P-68

2011

29

2

Fish collection

Dr. G. H. Hartman  
Dr. George Hartman

J. M. Hartman

May 25, 1880

1880

635.21

## Ա. Զ. Դ.

Հայաստանի սովելոց խնամատար Կեդրոնական Յանձնա-  
ժողովը զթշուառ սովատանչները մէկ կողմէ ըստ կարելոյն  
խնամելու աշխատած տտեն, բարձալով միւս կողմանէ նոցա  
ապագային համար ևս հարկ եղած միջոցները ձեռք առնուլ  
արժան և անհրաժեշտ դատեց գետնախնձորի (Քոնդիկ) մա-  
կութեան վրայ՝ երկրագործութեան արուեստի մասնագիտ  
Մէծ. Գէորգ էֆ. Վթիմարաճեանի ամենաոլարդ ոճավ գրած  
սոյն տետրը տապագրել տալ, և ձրիսալէս ցրուել Հայաստանի  
մէջ, որպէս զի հն ևս անմիջապէս մշակուի սոյն օգտակար  
բայրը, որոյ վրայ գովեստներ խօսել աւելորդ է, զի արդէն ամ-  
բողը եւրոպաց ու Ամերիկայ փորձերով հաստատած է սորա  
պէտքն ու օգտակարութիւնը :

### Փ Ֆ Տ Ե Խ Ն Վ Վ

Ի ՎԵՐԱՅ ՄՇԱԿՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՈՐԾԱԾՈՒԹԵԱՆ  
ԳԵՏԱԱԽՆՁՈՐԴ

Եւրոպացիք Ամերիկան գտած ժամանակնին հռն  
տեղ բնածին բոյս մի ալ տեսան, որոյ արմատները խել  
մը ալիւրակից, ճաշակելի և խնձորանման մարմիններէ  
բազկանալով, զայն գետնախնձոր անուանեցին, իսկ  
բուսաբանական լատին բառով Սէլանու Ռուդէուսու կոչե-  
ցին. յետոյ այս գետնախնձորներէն յեւրոպաց իրենց  
նախնի հայրենիքն ալ բերին տնկեցին, և փորձով տե-  
սան որ ոչ միայն նոր ապրուստ մի է այն, այլ և սովո

2655-57

դէմն առնելու ալ զօրաւոր միջոց մը . վասն զի թէ և  
երեք քաշ գետնախնձորը մէկ քաշ ցորենի չափ սնունդ  
հաղիւ կրնայ տալ , բայց մի և նոյն տարածութեամբ  
գետնի մը վրայ ցորենին տասնապատիկը յառաջ կու  
գայ անկէ , ուստի նորա մշակութեամբ մի և նոյն հողը  
մէկի տեղ երեք մարդ կրնայ կերակրել . մանաւանդ  
տյսարմատները գետնին մէջ պահպանուած ըլլալնուն  
կարկուտէ , մարախէ և անջրդութենէ չեն վնասուիր  
ուրիշ արմտեաց չափ . և Աստուած մի' արասցէ , երբ  
յիշեալ պատուհամները՝ միւս բերքերը փճայնեն ,  
գետնախնձորը կրնայ ապահով կերպիւ ձեռք բերուիլ :  
Այս օգտակարութեանց համար Եւրոպացիք սկսան  
անոր մշակութիւնը ամենայն ջանքով տարածել , և  
ժողովուրդը վարժեցընել զայն գործածելու . այնպէս  
որ այսօր Եւրոպայի ամեն կողմէ չի կայ երկրագործ մը  
կամ պարտիզան մը որ զայն քիչ կամ շատ չի մշակէ .  
և ոչ ալ թագաւորաց պալատէն սկսելով մինչեւ յետին  
աղքատին խրճիթին մէջ սեղան մը կրնայ տեսնուիլ  
որոյ վրայ գետնախնձորը պակաս ըլլայ :

Հիմա Տաճկաստանի մէջ ալ թէ՛ ՚ի Պօլիս և թէ  
ուրիշ քաղաքներ՝ գետնախնձոր (վաթաթէս) ուտե-  
լու սովորութիւնը սկսած է մեծաւ մասամբ Եւրոպայէն  
բերուելով , բայց աւելի օգտակար և փափաքելի է  
որ մեր գիւղացիք զայն մշակելու հետեւին , որով ի-  
րենց համար առատ և սննդարար ուտելիք մը ունենա-  
լէ զատ , կրնան ծախել կամ գոնէ աւելորդը կենդա-  
նեաց կերցընել , ինչպէս որ հիմա պիտի բացատրենք :

Անցեալ տարուան չորութեան և ձմեռուան սաստ-  
կութեան պատճառաւ այժմ մանաւանդ Հայաստա-  
նի մէջ հարիւրաւոր գեղեր և քաղաքներ սովու ձեռու  
քէն կը շարչարուին . Աստուած մէկ մ'ալ չի ցուցընէ ,  
բայց քանի որ խոհական մարդենք , մեղի ալ պարտք  
է ջանալ և աշխատիլ չարեաց առաջըն առնելու :  
Ահա , երկրագործ եղբարք , գետնախնձորի մշակու-  
թիւնը ձեզի սովի ժամանակ զօրաւոր օգնական մի է .  
ձեր սովորական վարուցանի հետ ամենքդ ալ հոգ տա-  
րեք մէյմէկ քիչ այս բոյսն ալ հասցընել . գիւրին է  
անոր մշակութիւնը , մի միայն քիչ մը աշխատութիւն  
կ'ուզէ , որուն կանայք և տղայք ալ կրնան օգնել .  
մի' խնայէք այս աշխատութիւնը , որ արմտեաց մշա-  
կական գործողութեանց ատենին չի հանդիպելով՝ ար-  
գելք չըլլար անոնց , և ապահով եղիք որ եթէ կլիմա-  
գելք չըլլար անոնց , ու ապահով եղիք ու հողերնուգ բնու-  
թիւնը յարմարի , ձեր քիչ մը աշխատութեան վարձքն  
առատօրին կ'առնուք , և ձեր ամբարներուն մէջ ալ  
սովի ժամանակ ուտելիք մը աւելի կ'ունենաք :

Ահա՝ ասոր մշակելուն կերպը :

Նախ ընտրելու է պարարտ , խորունկ և թեթեւ  
հող մը , որ շատ տեղ ձորերն ու դաշտերը կը գտնը-  
ւին , և ՚ի հարկին աղբարկելով բորելու է զայն՝ երկու  
թիզի չափ խորունկութեամբ , կամ գօթանով և կամ  
երկժանի բահով ու բրիզով . այսպէս պատրաստուած  
հողը որքան փարուն և կակուղ վիճակի մը հասած ըլ-  
լայ , այնքան դիւրաւ կը ճիւղաւորին ու կը շատնան

արմատները նորա մէջ . բայց ընդհակառակն կարծր ու չոր հօղի մէջ հարկաւ չեն կրնար դիւրաւ ծլիլ ու աճիլ : Արդ՝ գետախնձորը հողին ներքեւ աճող և շատցող բերք մը ըլլալով՝ յաջողութեան դլիսաւոր պէտք եղածը ահա այս հողին առաջին պատրաստութիւննէ , որ եթէ կարելի է՝ պէտք է ձմեռուընէ առաջ ընել : Երկրորդ գործողութիւնն է գետնախնձորը տնկելու կերպը , որ կը կատարուի Մարտ և Ապրիլ ամառ մէջ՝ տեղւոյն օդին համեմատ , երբ որ ա՛լ գարնան պաղերուն վախն անցած է : Ամեն մէկ գետնախնձորի տնրեւները կանդունի մը չափ տարածուելուն համար՝ պէտք է որ տունկերը ամեն կողմէն մէյմէկ կանդուն հեռու գտնուին . ուստի մեծ արտերու մէջ արօր կը գործածուի , և մարդ մը կողովի մէջ գետնախնձորներ տանելով՝ բացուած ակօսին մէջ իրարմէ մէյմէկ քայլ հեռու հատ հատ տեղաւորէ , և արօրին երկրորդ անդամ անցնելու ատեն՝ գետնախնձորները անոր գարձուցած հողին ներքեւ ծածկուին : Խոկ փոքր արտերու կամ պարտէզներու մէջ՝ որ վերը ըսածնուս նման առաջուց լաւ մը բորուած ու պատրաստուած ըլլալու են , մարդ մը բահով հինգ վեց մատ խորութեամբ և միշտ իրարմէ կանդուն մը հեռու հողը վերցընելու է , և ուրիշ մէկն ալ բացուած ծակին մէջ հատ մը գետնախնձոր ձգելու է , և յետոյ հողը վրան նետուելու և բաժին կանակովը տափանուելով ծածկուելու է :

Գետնախնձորին բոյսը ամեն տեղ հունտ չի հասցընել . թէ որ հասցընէ՝ զայն ցանելով՝ նախ փոքրիկ

ինձորներ կը բուսնին , և հետեւեալ տարին ասսնք անկուելով՝ հետզհետէ կատարեալ դեանախնձորներ յառաջ կու գան . բայց աւելի դիւրին և գործնական կերպն է բուն խոկ գետնախնձորը անկել , որոյ վրայ աշկունք կամ պտկունք գանուելով , ասոնցմէ կը ծլին նոր արմատներ ու ծիզնը , և անկուած ինձորը որ նոցա սնունդ կը լինի , կը փճանայ ու կը փտտի . այնպէս որ եթէ գետնախնձոր մը այնքան կտորի բաժնես՝ որգան որ աչք ունի , և զատ զատ սնկես , և կամ սովի ժամանակ միջուկը ուտելու գործածելով՝ երեսին կեղեւը մաշկը միայն դանակով հանես ամբողջ աչքերովը միատեղ և զայն սնկես , գարձեալ կը ծլին ու բերք կու տան . միայն թէ աւելի ապահով ըլլալու համար՝ թէ որ գետնախնձորները փոքրիկ են՝ ամբողջ տնկելու , և խոշորները կիսած սնկելու է որ ամեն մէկուն վրայ մի քանի աչքեր գտնուին , այն ատեն բերքն ալ աւելի առատ կըլլայ :

Գետնախնձորը ծլելէն և ծիզերը հինգ վեց մատ բարձրանալէն յետոյ , հողին երեսը աքցանով (քէլրէթին) կամ կաստով բորելու և կակցընելու է . և անկէ տասնուհինգ կամ քսան օր ալ վերջը ծաղիկները բացուելու սկսած ատեն գարձեալ նոյն գործողութիւնը ընելով՝ հողը դէսլ 'ի արմատներուն վրայ քաշելու դիզելու է , որպէս զի աւելի աճին և բաղմանան վերջապէս գետնախնձորի մշակութեան նպատակը ոչ թէ հունտ հասցընել , այլ շատ արմատներ յառաջ բերել ըլլալով , երբ բոյսերը իրենց կատարեալ հասակին հասած՝ սկսին

ծայրերէն ընդ հանրապէս ծաղկիլ, դանոնք ըղունքով  
քշտելու թափելու է, որպէս զի տերեւներուն պատ-  
քաստած հոյզը ծաղկըներուն երթալով պարապ կորսը-  
ւելու տեղ, երթան արմատներու մեծնալուն օգնեն

Ալ այնուհետեւ ուրիշ գործողութիւն չի մնար,  
հապա սպասելու է որ տերեւները ինքնին թառամին  
և չորնան, որ նշան է թէ արմատները հասած են, և  
ժամանակ է զանոնք քաղելու : Այս գործողութիւնը  
կատարելու համար օգը բաց օր մը ընտրելով՝ երկճզի  
բահով կամ բրիչով ամեն մէկ արմատ տակն ու վրայ  
ընելու է, բայց գործիքը բաւական հեռուէն պէտք  
է հողը մխել, որպէս զի խնձորները ճեղքուելով չըլլայ  
որ վիտին . մէկ կողմէն ալ այս խնձորները որ փունջ  
կազմած են, անոնց վրայ գտնուած հողը թօթուելու  
և գետնին երեսը փռելու է, և 'ի հարկին մէկ երկու  
օր այնպէս փռած թողելու է՝ որպէս զի երեսնուն խո-  
նաւութիւնը հովէն ու արեւէն լաւ մը չորնայ, որ յե-  
տոյ պահուած տեղերնին չի վիտին : Եթէ այսպէս  
ցամքեցուցած գետնախնձորը գետնափոր մառանի կամ  
շեմարանի մէջ մէկ երկու կանգուն բարձրութեամբ  
գիզուած, կամ լաւ և՛ կողմիներու մէջ պահուի,  
մինչև հետեւալ տարին անզնաս կրնայ մնալ. իսկ եթէ  
գիզուածով տաքութիւն և փունքիւն պատահի անոնց  
մէջ, անմիջապէս գէզը ցրուելու, տարածելու է, և  
մինչև գործածութեան ժամանակը զդուշութեամբ  
պահելու է զանոնք :

Այս մշակական համառօտ հրահանդը լրացընելու

համար պարտիմք հիմա յիշեալ բոյսին գործածութեան  
կերպերը յայտնել որով ամեն ոք կարենայ անկէ օդուտ  
քաղել : Իբր մարդոց կերպակուր՝ զայն գործածելու ա-  
մենէն պարզ եղանակը ջրի մէջ խաչել կամ մախրոյ  
տակ և կամ փռան մէջ եփել, և երեսի մաշկը հանելով  
միջուկը քիչ մը աղով և կամ աղցանի պէս զանազան  
համեմներով ուտելն է: Դարձեալ ստրկուած գետնա-  
խնձորը կարագի մէջ կրնաց տապկուիլ և կամ խորով-  
ուած մոի հետ խորովուիլ : Նորա խաշուած և ճղմուածը  
երեք քաշ ալիւրի հետ մէկ քաշ խառնուելով, պատ-  
ուական հաց ալ կը շինուի, և զանազան ուրիշ կարկան-  
դակներ, խմորեղէններ և այլն :

կենդանեաց մնունդին համար նոխ պէտք է գիտ-  
նալ թէ մէկ քաշ գետնախնձորը երկու քաշ չոր խոտի  
չափ սննդաբար է, և ամեն տեսակ կենդանի կը վար-  
ժուի զայն ախորժանօք ուտելու, եթէ յարմար չափով  
ու կերպով տրուի անոնց : Օրինակի համար . հում գետ-  
նախնձորը աւելի կաթ և ոյժ տալու կը ծառայէ, և  
եփածը գիրցընելու համար . ուստի եղանց, կաթնտու  
կովուց և ոչխարաց զանիկայ չարդելով և վրան քիչ մը  
աղ ցանելով հում տալ պէտք է . իսկ գիրցընելու և  
մորթելու յատկացեալ կենդանեաց նաև հաւոց ընդ-  
հանրապէս եփած և թակով մը ճղմուածը տալ պէտք  
է : Զին նաև կը սիրէ գետնախնձորը, բայց հումը  
չուտեր, ուստի եփած և ճղմած կը տրուի : Այսպէս  
կենդանեաց տրուելու գետնախնձորը եփելու ամենէն  
գիւրին կերպը այս է . վիւան մէջէն հացերը հանելէն

յետոյ գեանտխնձորը լեցընելու է և վուռը փակուած  
ու ծեփուած մէկ երկու ժամ պէտք է թողուլ, որ  
փուան տաքութիւնովը բուն իսկ գետնախնձորներէն  
ելած շոգին զիրենք խաչէ: Նաև ջրով լեցուն կաթ-  
սոյի, խորինի մը վրայ՝ տակի ճակատը ծակծըկած  
տակառ (ֆըլ) մը կանդնեցընելու և ասոր մէջ գետ-  
նախնձորները լեցընելէ ետքը՝ վրայի ճակատը լու մը  
գոցելու և ներքեւը կրակ վառելով ջուրը եռա-  
ցընելու է, անկէ ելած գոլորշիքովը կրնան խաչիլ.  
բայց ինչ կերպով որ ըլլայ, եփած գետնախնձորը  
միշտ ճղմելէն և պաղեցընելէն յետոյ տալու է կենդա-  
նեաց, ինչու որ տաքը կրնայ մնաս տալ անոնց ստա-  
մոքսին, և չի ճղմուած տրուին նէ՝ արտորանօք ուտե-  
լով կրնայ ըլլալ որ ամբողջ գետնախնձոր մը կլեն և  
կոկորդնին մնայ ու խեղդէ զիրենք: Վերջապէս գետ-  
նախնձորն առատօրէն մշակուած երկիրներու մէջ յա-  
տուկ գործարաններ հաստատուելով՝ անկէ օոլոյ և ս  
կը հանեն, որ Քօլա անուամբ կը ծախուի և կտաւեղի-  
նաց գործարաններու մէջ խիստ շատ կը գործածուի:  
Օոլայի գործարանաց մէջ օոլան հանելէն յետոյ՝ մնա-  
ցած մրուրն (թօրթու) ալ կենդանեաց կը կերցընեն:

Ահա այսպէս գետնախնձորին ամեն կերպով օգ-  
տակար բոյս մը ըլլալն յայտնի եղաւ. ա'լ մեր երկրա-  
գործաց ու մշակաց կը մնայ պէտք եղած աշխատու-  
թիւնն ընել, և հոգ տանիլ որ հատցընեն զանիկայ,  
ուրիէ իրենց համար մէծ օդուտ յառաջ պիտի գոյ:

ՀՀ Ազգային գրադարան



NL0081577

ՀՀ Ազգային գրադարան



NL0081576

ՀՀ Ազգային գրադարան



NL00835130

ՀՊ 102

ՀՀ Ազգային գրադարան



NL0081575

ՀՀ Ազգային գրադարան



NL0081579

ՀՀ Ազգային գրադարան



NL0081574

ՀՀ Ազգային գրադարան



NL0081578

ՀՀ Ազգային գրադարան



NL0081573

